Հետևաբար, Դատարանը, նկատի ունենալով, որ հայցվոր կողմը նախապես վճարել է սահմանված պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է մերժման, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 234.5-րդ, 234.12-րդ, 360-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը՝

ՎՃՌԵՑ

1. <<Արտշին 1>> ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ <<Արտշին 1>> ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնակատար Ն. Գալստյանի 02.05.2023 թվականին կայացրած թիվ 5 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4. Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ